«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մաղլեն Վարդումյան

Ուսումնական հաստատություն՝ Մասիս քաղաքի հ3 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ----------5

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ----------8

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ. ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ---------- 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ---------- 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի ինչ գիտես:

Դիստերվերգ

Լեզուն իրացվում է հասարակության լեզվական գործունեությամբ, հաղորդակցման միջոցով, և հենց մարդու հաղորդակցումով օտարվում ու դառնում է օբյեկտիվ ռեալություն: Հաղորդակցման մեջ , խոսելու ընթացքում լեզուն իրացվում է իրական խոսքի միջոցով: Եվ քանի որ խոսքը, իր հերթին, ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատի, տվյալ մարդու խոսքային գործունեության արդյունք, ապա սա ինքնին պահանջում է խոսքի ու լեզվի և, դրա հետ միասին ու դրա միջոցով, անհատականի ու հասարակականի փոխհարաբերության լուսաբանություն:

Խոսքը մասնավոր դրսևորումն է, բառաձևերի, բառակապակցությունների ու նախադասությունների, դրանց կազմության ու գործադրության կանոնների այն ամբողջ հարստության , որ ներկայացնում է տվյալ լեզուն տվյալ վիճակում, իբրև պատմական զարգացումով ձևավորված և խոսողներից յուրաքանչյուրի գիտակցության մեջ որպես լեզվական ներունակ կարողություն հաստատված վիճակ: Յուրաքանչյուր բառ , քերականական ձև, բառերի կապակցությունների կանոններ և այլն խոսքից դուրս վերացական միավոր է:**Պահարան** բառն արտահայտում է **պահարան** առարկայի հասկացությունն ընդհանրապես և ոչ թե որևէ առանձին **պահարան**ի, գոյականի **–ից** վերջավորությունը բացառական հոլովի վերջավորությունն է ընդհանրապես և ոչ թե այս կամ այն բառի: Խոսքի մեջ դրանք մասնավորվում են, ստանում առարկայական վերաբերություն.

«Այս պահարանից մի գիրք վերցրի» նախադասության մեջ թե **պահարան** բառը և թե **–ից** վերջավորությունը մասնավորված են, նրանք ստացել են իրական կիրառություն և դրանով իսկ՝ մասնավորվել: Այն , ինչ որ խոսքի մեջ մասնավոր է և կոնկրետ , խոսքից դուրս , մեր գիտակցության մեջ ընդհանուր է, վերացարկված. նրանք վերացական միավորներ են, կանոններ ու կաղապարներ , որոնք մասնավորվում , իրական դրսևրում են ստանում հաղորդակցման ժամանակ, խոսքի մեջ :

Խոսքային հաղորդակցումը մշտապես ուղեկցելու է մեզ, այն մեր առօրյայի անբաժանելի մի մասն է և մշտապես բացահայտվելու կարիք ունի:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել խոսքային հաղորդակցման էությունն ու դրա կազմակերպման արդյունավետ եղանակները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. բացահայտել խոսքային հաղորդակցմանը նպաստող ուսուցման մեթոդները,

3. անդրադառնալ խոսքային հաղորդակցման իրականացմանը մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասաժամերին :

Գրականության ակնարկ

Ֆերդինանդ դե Սոսյուրը լեզուն բնորոշեց որպես հասարակական երևույթ, ըստ որում այս դեպքում նա լեզուն դիտում էր որպես ամբողջական և համասեռ երևույթ, որի մեջ միաժամանակ ու միասնաբար հանդես են գալիս բնախոսականը, ֆիզիկականը և իմաստայինը: Դրանից ելնելով է հասարակական երևույթ , իսկ խոսքը՝ անհատական:Հիմք ընդունելով այս և մի շարք այլ ելակետային դրույթներ ՝ Սոսյուրը , խոսքի անհատականությունը շեշտելով, ընդգծում էր նաև , որ «խոսքային գործունեությունն ունի և՛ անհատական, և՛ հասարակական կողմ, ընդ որում չի կարելի հասկանալ մեկն առանց մյուսի»[1]:

Լեզուն, խոսքը հասարակական-պատմակամ զարգացման արդյունքն են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով:

Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության արդյունքում ՝ դառնալով այգ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

Խոսքի զարգացումը նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ , նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների , բոլոր օրինաչափությունների տեսակետից[2]:

Հայտնի լեզվաբան Մ. Վ. Պլանովը «լեզու» և «խոսք» հասկացությունների բացահայտման նպատակով ներկայացնում է մի ուշագրավ նույնություն. «Պատկերացրեք մի հաստոց, որից անընդհատ դուրս են գալիս նոր ժամացույցներ: Դրա համար անհրաժեշտ են. առաջին՝ նախապես պատրաստված մասեր, երկրորդ՝ հայտնի կանոնների համապատասխան պատրաստի մասերի հմուտ համակցում: Այդ կանոնները կարող են ինչ-որ տեղ գրված լինել, բայց կարևորը դրանց՝ հավաքող վարպետի գլխում լինելն է »[3]:

Այս համեմատության մեջ ժամացույցի մասերը բառերն են, լեզուն, իսկ պատրաստի ժամացույցը՝ խոսքը:

Խոսքային հաղորդակցման ընթացքում մեզ համար կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

---

[1] В. А. Звегинцев, История языкознания XIX XXвеков в очерках и извлечениях, часть I, 1960, с. 324.

[2] Աբրահամյան Ս. Գ. , Աշոկերտի խոսքի զարգացումը, Ե. , Լույս, 1973, էջ 75:

[3] Энциклопедический словарь юного филолога, Сост. М. А . Азров, М ., 1984 сс. 338-339

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատվում են մարդու խոսքի զարգացման հետևյալ փուլերը.

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք,

2. մսուրային տարիք (մինչև 3 տարեկան)՝ բառի հնչյունային և վանկային կառուցվածքի, նախադասության բառերի միջև գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային),

3. նախադպրոցական տարիք (3-ից մինչը 6 տարեկան) մենախոսության և ենթատեքստային խոսքի, պարզ ներքին խոսքի դրսևրում,

4. կրտսեր դպրոցասկան տարիք (7-ից մինչև 10 տարեկան)՝ խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար, խոսքի քերականական կառուցվածք,), գրավոր և բանավոր խոսքի, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում,

5. միջին դպրոցական՝ դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝ խոսքի գրական նորմերի, ոճի՝ ըստ ամենայնի տիրապետում, անհատական ոճի ձևավորում։

6. ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք (15-ից մինչև 17 տարեկան)՝ խոսքի մշակույթի կատարելագործում, լեզվի առանձնահատկությունների տիրապետում, անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում։

Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցավ, որտեղից մեթոդիկան քաղում է իր համար սկզբունքորեն կարևոր տեղեկատվություններ։ Այդ գիտություններից առաջատարը լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը։

Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով գիտության և պրակտիկայի կապը։

Այս ամենից զատ , կարևոր է ուսուցչի և սովորողների ծնողների, նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը, սովորողների հաղորդակցումը, նրանց գրագետ խոսքը ձևավորելու համար։ Հարկավոր է համագործակցել սովորողների դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար , քանի որ ավելի հեշտ է դաստիարակել , քան թե վերադաստիարակել ։ Վերադաստիարակությունը սովորողների մեջ ոչ ճիշտ կամ ոչ լրիվ ձևավորված բարոյականային հատկանիշների,բնավորության գծերի, սովորույթների, արարքների, վարքի

բարեփոխումն ու կատարելագործումն է՝ հասարակության նորմերին համապատասխան , նախապես ճիշտ ընտրված մեթոդների ու հնարների միջոցով[1] :

1 Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,էջ 284

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բոլոր ժամանակներում էլ խոսքը զորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Ցանկացած կիրթ մարդ, մտավորական և հատկապես ուսուցիչ պարտավոր է բարձր մակարդակով տիրապետել մայրենի լեզվին, քանի որ հենց ինքն է հասարակությանն առաջ մղողը, նրան վեհ գաղափարներով զինողն ու դաստիարակողը:

Ուսուցիչն, ընդունելով իրեն վստահված ամենահզոր զենքը՝ լեզուն, պետք է կարողանա զգուշությամբ և վարպետորեն կիրառել այն՝ անընդհատ կատարելագործելով իր մասնագիտական կարողությունները՝ կիրթ , գեղեցիկ և հետաքրքիր խոսք կառուցելու համար: Անառարկելի փաստ է, որ աշակերտին ոգևորող լավագույն օրինակը ուսուցչի խոսքն է, ուստի ուսուցիչը պետք է խորությամբ զգա և ընկալի մայրենի լեզվի յուրաքանչյուր հնչյուն, բառ, արտահայտություն՝ վերջիններից իմաստային բոլոր դրսևորումներով , այսինքն՝ ունենա լեզվազգացողության բարձր մակարդակ: Ուսուցիչը պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի դասավանդվող նյութը , որպեսզի աշակերտների բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման աշխատանքներն իրականացնի ճիշտ մեթոդաբանությամբ:

Ուսուցչի լեզվամտածողության զարգացմանը մեծապես նպաստում են ճարտասանական գիտելիքներն ու դրանք գործնականում կիրառելու կարողությունը: Ուսուցչի խոսքը պետք է լինի հարուստ և բազմազան, ճշգրիտ և հստակ, պարզ և մատչելի, սեղմ և տրամաբանական, արտահայտիչ , պատկերավորման արտահայտչական միջոցների կիրառմամբ: Ուսուցչի արտահայտիչ պատկերավոր խոսքն անհամեմատ ազդեցիկ է, ուժեղ. այն հարստացնում է խոսքի բովանդակությունը , զորացնում է արդյունավետությունը: Ոչ միայն ազդում է աշակերտի մտքի վրա , այլև արթնացնում է նորանոր զգացումներ, վառում է երևակայությունը: Դրանով նա իր խոսքը դասարանի համար դարձնում է ավելի հետաքրքիր , իսկ հաղորդվող միտքն ավելի ընկալելը: Հնչերանգը բանավոր խոսքի կարևոր տարրերից է և պայմանավորվում է մի շարք գործոններով ՝ խոսողի անհատականությունը, հաղորդման տեսակը, իրադրությունը, խոսողի հոգեվիճակը, խոսքի կառուցվածքը դասարանի սոցիալ- հոգեբանական կազմը և այլն:

Ուսուցիչը պետք է պահպանի ուղղախոսության բոլոր կանոնները. ուղղախոսական շեղումներ

առաջանում են բարբառների և օտար բառերի ազդեցությամբ, ինչպես նաև ժողովրդական ստուգաբանության հետևանքով:

Դասի ժամանակ ուսուցիչը պետք է մի կողմ թողնի առօրյախոսակցական ոճը և այն կիրառի խիստ անհրաժեշտության դեպքում, օրինակ գրականության նյութը մատուցելիս:

Ուսուցիչը պետք է սահմանի որոշակի դիմելաձև, ցանկալի է աշակերտին դիմելիս հնչեցնել նրա անունը լիարժեքորեն, առանց փաղաքշական երանգների և կրճատման: Ուսուցիչն իր սերը պետք է արտահայտի զուսպ բառապաշարով, սիրալիր , հոգատար հայացքն ու վերաբերմունքը ավելի գերադասելի են:

Ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի ձայնի տեմբրին, հնչերանգը անչափ կարևոր դեր ունի դասի մատուցման ժամանակ: Հնչերանգի փոփոխության ժամանակ կարևոր են նաև տրամաբանական դադարները:

Կարևորում ենք նաև հանդիսավոր ելույթին վայել ուսուցչի ճարտասանական խոսքը , այն կարևոր միջոց ենք համարում դասի ժամանակ սովորողների ուշադրությունը գրավելու համար: Ուստի ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի հանդիսավորությամբ և ճիշտ ընտրված հնչերանգով :

Ուսուցիչը պետք է խուսափի դժվար ըմբռնելի բառերի կիրառումից, կարելի է ընտրել դրանց մատչելի տարբերակները. օրինակ

Կեղծ – այլ ոչ թե բռնազբոսիկ

Շտապել -այլ ոչ թե աճապարել,

Շատախոս- այլ ոչ թե շաղակրատ,

Կրունկ-այլ ոչ թե գարշապար,

Աղավաղել- այլ ոչ թե աղճատել,

Բայց դա չի նշանակում, որ սովորողը չպետք է իմանա այս բառերի բացատրությունները. ուստի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով հարկավոր է դասին համընթաց , զուգահեռաբար հարստացնել սովորողների բառապաշարը , բայց ոչ դասի նյութը մատուցելիս, եթե իհարկե խոսքը չի վերաբերում բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցմանն ու գեղարվեստական գրականության նյութի մատուցմանը:

Անառարկելի փաստ է, որ ուսուցչի խոսքը պետք է լինի մատչելի, որքան մատչելի , այնքան դասը հասկանալի, մատչելի, բայց ոչ պարզունակ: Ուսուցչի խոսքը

պետք է համեմված լինի մակդիրներով, համեմատություններով, բառակրկնություններով, փոխաբերություններով, շրջասույթներով, բառերի ձևաիմաստային խմբերից ընտրված ճիշտ օրինակներով։

Դասի առաջին րոպեները շատ կարևոր են հետագայում հաջողության հասնելու, սովորողների ուշադրությունը գրավելու, դասի նպատակներին հասնելու, դասի խնդիրները լուծելու , դասը հաջողված համարելու համար։ Ուստի ուսուցիչը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի դասի առաջին րոպեների վրա, որի ժամանակ վճռական դեր ունի ուսուցչի խոսքը։ Ուսուցիչը պետք է խուսափի օտարաբանություններից , անհարկի բարբառայնությունից, գռեհկաբանությունից։

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ. ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ,ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Ուսուցչի կարևորագույն գործառույթներից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ **գործիքը** ուսուցման նախապես պլանավորած նպատակներին հասնելու համար:

Խոսքային մեթոդները լայն կիրառություն ունեն հայոց լեզվի, գրականության դասերին. գեղարվեստական ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը, ազատ շարադրանքները և այլն: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ , անշուշտ, կարելի է օգտագործել նաև դիտողական պարագաներ: Խոսքային մեթոդների արդյունավետությունը մասնավորապես ակնառու է ներկայացումների դիտման, դրանց քննարկման, ներկայացման թեմաներով (կամ կինոնկարների, կարդացած ստեղծագործությունների) բանավեճերի, հանդիպումների և խոսքային բազմազան վարժանքների կատարման ժամանակ:

Խոսքային մեթոդներն են.

1. Զրույց
2. Դպրոցական դասախոսություն
3. Պատմություն
4. Բացատրում,
5. Աշխատանք դասագրքով

Խոսքային մեթոդների օգնությամբ լուծվում են սովորողներին համակարգված գիտելիքներ հաղորդելու, նրանց մոտ խոսքի կուլտուրայի ձևավորման խնդիրները: Նրա արդյունավետության կարևոր պայմաններ են խոսքի մատչելիությունը, արտահայտչականությունը, հստակ տրամաբանական կառուցվածքը, պատկերավորությունն ու ապացուցականությունը:

Զրույց

Զրույցի նպատակը սովորողին այս կամ այն հարցի շուրջը խորհրդածելուն մղելն է: Ուսուցիչը հատուկ կազմակերպված հարցերի միջոցով դրդում է աշակերտին դատողություններ ու վերլուծություններ կատարել փաստերի և երևույթների մասին, որի արդյունքում ինքնուրույն հասնում է համապատասխան տեսական եզրակացությունների ու ընդհանրացումների:

Դպրոցական դասախոսություն

Սա ուսուցման մի մեթոդ է, որի դեպքում ուսուցիչը բավական երկար ժամանակ բանավոր շարադրում է նկատելի ծավալով ուսումնական նյութ, օգտագործելով սովորողների իմացական գործունեության ակտիվացման որոշակի հնարներ :

Այս մեթոդի գլխավոր գործառույթը համակարգված և խոր տեսական գիտելիքներ հաղորդելն է : Այն կիրառելի է հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում :

Պատմություն

Պատմելը նկարագրական բնույթի ուսումնական նյութի վառ կենդանի ներկայացումն է:

Սովորաբար այս դեպքում ուսուցիչը փորձում է չդրսևորել իր վերաբերմունքը երևույթների նկատմամբ, աշակերտին մտածելու և ինքնուրույն եզրակացություններ անելու ազատություն տալով:

Բացատրում

Բացատրումը ուսուցման այն մեթոդն է, երբ ուսուցիչը ոչ այնքան նոր նյութ է հաղորդում, որքան վերլուծում է նոր ուսումնական նյութը, պարզաբանում և ապացուցում է այս կամ այն դրույթը : Օրինակ, ապացուցում է որևէ երկրաչափական թեորեմ :

Աշխատանք դասագրքով

Այս մեթոդի հիմնական նպատակը սովորողներին ուսումնական գրականության հետ աշխատել սովորեցնելն է: Լայն առումով այն իր մեջ ներառում է անհրաժեշտ տեղեկատվության որոնման, մշակման և ընտրողաբար յուրացման կարողությունների ձևավորումը:

Բարձրորակ ուսումնական գիրքը հաջողությամբ կարող է լուծել ուսուցման զարգացնող, դաստիարակող, խթանող և վերահսկող ֆունկցիաները :

Կան նաև մի շարք նոր մեթոդներ, որոնք հիանալի ընտրություն կարող են լինել խոսքային ուսուցման ժամանակ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Հետազոտության ընթացքում մենք կիրառել ենք դրանք:

Հին պայուսակ

Այս մեթոդը հնարավորություն է տալիս խորհրդանշական պայուսակի պարունակության միջոցով ներկայացնելու սեփական անձը: Մասնակիցը պատկերացնում է, թե ունի մի հին պայուսակ, որի մեջ պետք է դնի երեք իր՝ մեկն իր անցյալը, մեկն իր ներկան և վերջինն իր ապագան բնորոշող: Այնուհետև ելույթի ժամանակ մասնակիցը պետք է հիմնավորի՝ ինչու է ընտրել հատկապես այդ երեք առարկաները: Այս հնարն ուղղված է սովորողի բանավոր խոսքը կազմակերպելուն և զարգացնելուն: Այն սովորողի լեզվական, մտածական և տրամաբանական ունակությունները միավորող և բացահայտող հրաշալի միջոց է: Նախ սովորողը պետք է ընտրի որոշակի խորհրդավորություն և նշանակություն ունեցող իրեր, այնուհետև կարողանա դրանք կապել իր անցյալի, ներկայի և ապագայի հետ: Իսկ լսարանին համոզելու համար պետք է կարողանա համապատասխան բառեր և արտահայտություններ ընտրել, իսկ ամենակարևորը՝ միտքը պետք է լինի տրամաբանված, խոսքը՝ սահուն և գեղեցիկ: Բերենք մեկ օրինակ.

- *Ես իմ անցյալը բնութագրելու համար ընտրել եմ բանալին, քանի որ իմ ողջ կյանքում եղել եմ որոնող, պրպտող անձնավորություն, սիրել եմ կարդալ, ուսումնասիրել ինձ համար անծանոթ թեմաներ և նյութեր.դա է երևի պատճառը նաև, որ ընտրել եմ բանասերի մասնագիտությունը՝ շատ գրքեր կարդալու և քննարկելու համար: Իմ ներկան նկարագրելու համար ես նորից ընտրում եմ բանալի, որովհետև շարունակում եմ ապրել նույն ոգով՝ փնտրելով ու փորձելով բացահայտել նորանոր ոլորտներ. այդ է պատճառը, որ չեմ բավարարվում իմ ունեցածով ու գիտեցածով: Ես մասնակցում եմ ամենատարբեր սեմինարների և՛ իմ հայրենիքում, և՛ արտերկրում: Ապագաս նկարագրելու համար էլի նախընտրում եմ բանալին ու կողպեքը, որովհետև այնքան բաներ կան բացահայտելու, որ բանալին ինձ հաստատ էլի պետք կգա բազնաթիվ կողպեքներ բացելու համար:*

Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի

Յուրաքանչյուր մասնակից մի պահ իրեն պատկերացնում է որպես հայտնի գրող և օգտագործելով ընդամենը վեց բառ՝ փորձում է ներկայացնել իր բնավորության էական կողմերը: Այս հնարը վերցված է Հեմինգուեյի հայտնի վեցբառանոց պատմվածքից, որը ժամանակին հատուկ մրցանակի արժանացավ: Պատմվածքն ունի հետևյալ բովանդակությունը. «Վաճառվում են նորածնի կոշիկներ.հագած չեն» (For sale: baby shoes, never worn.):Այս մեթոդը հրաշալիորեն կիրառվում է գրականության դասերին, սակայն կարելի է կիրառել նաև հայոց լեզվի որոշակի թեմաներ ուսումնասիրելիս, օրինակ՝դարձվածաբանությանն անդրադառնալիս կարելի է հանձնարարել կազմել վեց բառից կազմված ամփոփ միտք՝ կիրառելով առնվազն մեկ դարձվածք:

Օրինակ՝ *Երես առած* որդին *երես թեքեց* ծեր ծնողներից:

Աչքը ճամփին՝ մայրը *աչքը փակեց* կարոտի:

Pie (կարկանդակ) մեթոդը

Մասնակիցները կազմում են շրջան, որի կենտրոնում գրված է թեման կամ հետազոտվող հարցը: Ուսուցիչը շրջանը բաժանում է 4 կամ 6 մասի՝ ըստ ենթահարցերի: Մասնակիցներին հանձնարարվում է գաղափարներ առաջ քաշել յուրաքանչյուր ենթահարցի վերաբերյալ և դրանք գրել: Վարժության վերջում դիագրամը ներկայացնում է այն բոլոր գաղափարները/մտքերը, որոնք էլ կազմում են ընդհանուր թեման:

Օրինակ՝հայոց լեզվի բառագիտության բաժնից<<*Բառակազմություն, բառերի տեսակներն ըստ կազմության*>>թեմաներն սկսելիս լայնորեն կարելի է կիրառել այս հնարը: Որպեսզի սովորողը ի սկզբանե չդժվարանա նախ հասկանալու, հետո հիշելու բառերի բառակազմական տեսակները, կարելի է կիրառել վերոհիշյալ մեթոդը: Ուսուցիչը շրջան է գծում՝ մեջտեղում գրելով<<*Բառերի տեսակներն ըստ կազմության*>>թեմայի վերնագիրը: Այնուհետև շրջանը բաժանում է չորս մասի՝ չորս

կտորի (չէ՞ որ մեթոդը հենց կարկանդակ է կոչվում), յուրաքանչյուր կտորի վրա գրում է տեսակը՝ *պարզ, ածանցավոր, բարդ, բարդաածանցավոր*: Այնուհետև առաջարկում սաներին ըստ խմբերի մոտենալ գրատախտակին կամ տեղում իրենց բաժնում գրել այնա մենը, ինչ գիտեն կամ մտածում են տվյալ տեսակի մասին.
Օրինակ՝

Պարզ-հասարակ, անբաժանելի, արմատ, հակիրճ, կարճ, հեշտ ընկալելի նայլն:

Ածանցավոր-ածանցով կազմված, երկար, երկկազմ, պոչավոր, հավելյալ իմաստ, նորի մաստնայլն:

Բարդ-դժվար, խճճված, երկկազմ, եռակազմ, երկարաշունչ, անհասկանալի, արմատներնայլն:

Բարդաածանցավոր-շատերկար, ածանց ու արմատ, անհասկանալի, դժվարընկալելի, երկարաշունչ, նոր բառ նայլն:

Այս աշխատանքից հետո ուսուցիչը միացնում է կարկանդակի չորս կողմերը, բարձրաձայն ընթերցում խմբերի գրածները և ամփոփում՝ ասելով, որ բոլոր գրվածների մեջ կար ճշմարտության հատիկ, որ թվարկվածների մեծ մասը իսկապես բնորոշ է բառակազմական տվյալ տեսակին:

ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆԳԱՌ

Այս հնարը խմբային աշխատանքի շնորհիվ բոլոր խմբերի հետ աշխատելու հնարավորություն է տալիս՝ ծանոթանալով այլ խմբերի տեսակետներին և հավելելով սեփական տեսակետը:

- Քայլ 1.Դասարանը բաժանվում է խմբերի՝ ըստ իր նախընտրած մեթոդի:
- Քայլ 2.Խմբերին առաջարկվում է նստել նախօրոք պատրաստված սեղանների շուրջ, որտեղ դրված կամ փակցված են կանգառի անունը և նյութին վերաբերող մեկ հարց:
- Քայլ 3.Խմբերին բաժանվում է ուսումնասիրվող նյութը, վատման և նշագրիչներ:
- Քայլ 4.Յուրաքանչյուր խումբ 7-8 րոպեի ընթացքում կարդում է նյութը և վատմանի վրա գրում իր հարցին վերաբերող 2-3 ընդհանրացում (վատմանը պետք է մնա այդ սեղանին):
- Քայլ 5.Այնուհետև յուրաքանչյուր խումբ պտտվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ և հայտնվում մյուս սեղանի մոտ, վատմանի վրա ավելացնում մյուս խմբի հարցին վերաբերող 1-2 միտք ու շարժվում առաջ:

Նկատառում. չի կարելի արդեն գրված մտքի վրա որևէ ուղղում կամ ավելացում կատարել:

- Քայլ6. 4 սեղաններին մոտենալուց և գրառումներ կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ վերջում հայտնվում է իր հիմնական սեղանի մոտ և 3 րոպե ծանոթանում բոլոր գրառումներին:
- Քայլ7.Ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր հարցի էությունը՝ ըստ գրառումների:

1. <u>Երևանի բժշկական համալսարան</u>

Ի՞նչ կարծիք են հայտնում հայտնի բժիշկները էֆթանազիայի՝ ՀՀ-ում կիրառելու մասին:

2. **ՀՀ Ազգային ժողով**
   Ըստ ՀՀ օրենսդրության՝ թույլատրվու՞մ է էֆթանազիան ՀՀ-ում: Ինչու՞:
3. **Ազատության հրապարակ**
   Հայաստանի բնակիչները ի՞նչ դիրքորոշում ունեն էֆթանազիայի կիրառման մասին:
4. **Սուրբ Սարգիս եկեղեցի**
   Ի՞նչ դիրքորոշում ունեն հոգևորականները էֆթանազիայի կիրառման վերաբերյալ:

Յուրաքանչյուր խումբ գրավոր ներկայացնում է տրված հարցի 2-3 հիմնավորող պատասխան, հետո խմբերը պտտվում են ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ աշխատելով նախորդ խմբի հարցի շուրջ: Վերջում խմբերը ամփոփում են իրենց աշխատանքը՝ բարձրաձայն ներկայացնելով թե՛ իրենց, թե՛ մյուս խմբերի ներկայացրած տեսակետները կոնկրետ իրենց բաժին հասած հարցի վերաբերյալ:

Վեց գլխարկ

Այս հնարը կարելի է կիրառել հանդիպումների կամ դասի ժամանակ: Ժողովների կամ հանդիպումների ժամանակ այս հնարը թույլ կտա խուսափել ցանկացած առճակատումից, որը կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ տարբեր մտածողության տեր մարդիկ քննարկում են միևնույն խնդիրը, քանի որ յուրաքանչյուր մոտեցում ընդունելի է: Յուրաքանչյուր մտածո՞ղ գլխարկ տարբեր մտածելակերպի դրսևորում է:

Հնարի ընթացքը. Դասարանը/լսարանը բաժանվում է վեց մասի, յուրաքանչյուր փոքր խումբ վերցնում է առաջարկված վեց գույն ունեցող գլխարկներից մեկը: Խմբերին բաժանվում է քննարկվող նյութը: Խմբերը կարդում են նույն նյութը, ներկայացնում այն ըստ իրենց գույնի բնութագրիչների: Գույների բնութագրերը ներկայացված են ստորև:

- **Սպիտակ գլխարկ.** Այս գույնը խորհրդանշում է չեզոքությունը: Այս մտածող գլխարկ ունեցող մասնակիցը կենտրոնանում է առկա տվյալների վրա, ուսումնասիրում այն տեղեկատվությունը, որ ունի ձեռքի տակ, վերլուծում վերջին միտումները և տեսնում՝ ինչ կարող են սովորել դրանցից:Փնտրում է իր գիտելիքների մեջ առկա բացերը և փորձում լրացնել դրանք:
- **Կարմիր գլխարկ.** Հագնելով կարմիր գլխարկ՝մասնակիցը ուսումնասիրում է խնդիրները՝ օգտագործելով իր ինտուիցիան, ռեակցիան և զգացմունքները: Փորձում է հասկանալ նաև, թե ինչպես կարող են ուրիշները նույն հարցին զգացմունքային մոտեցում ցուցաբերել: Փորձում է հասկանալ այն մարդկանց արձագանքը, ովքեր դեռևս ամբողջովին ծանոթ չեն իր/իրենց հիմնավորումներին:

- **Սև գլխարկ.**Օգտագործելով սև գլխարկը՝ մասնակիցը ուշադրություն է դարձնում որոշման հնարավոր բացասական արդյունքներին: Փորձում է հասկանալ՝ որն է խնդիրը:Սա կարևոր է, քանի որ այն կարևորում է պլանի թույլ կողմերը: Այն թույլ է տալիս մասնակցին վերացնել դրանք, փոխել կամ դրանց դեմ հակահարվածային ծրագրեր պատրաստել:*Սև գլխարկը* օգնում է պլանները «ավելի կոշտ» և ավելի ճկուն դարձնելուն: Այն կարող է նաև օգնել հասկանալու թերություններն ու ռիսկերը նախքան գործողություններն սկսելը: Դա այս մոդելի իսկական դրական կողմերից մեկն է, քանի որ շատ հաջողակ մարդիկ այնքան են դրականորեն մտածում, որ հաճախ չեն նկատում իրական վտանգները:
- **Դեղին գլխարկ.** Այս գլխարկը օգնում է դրական լույսի ներքո դիտարկելու առաջ քաշված խնդիրը: Սա լավատեսական մոտեցում է, որն օգնում է տեսնել որոշման բոլոր առավելությունները և դրանց արժեքը: Մտածողության այս ձևը օգնում է շարունակելու աշխատանքը, երբ ամեն ինչ մռայլ է և թվում է դժվարհաղթահարելի:
- **Կանաչ գլխարկ.** Կանաչ գլխարկը ներկայացնում է ստեղծարարությունը:Սա խնդրի լուծման այն ձևն է, երբ հարցին պետք է մոտենալ ստեղծագործաբար: Սա ազատ մտածողության արտահայտություն է, որտեղ նոր գաղափարները քիչ են քննադատվում:
- **Կապույտ գլխարկ.**Այս մոտեցումը ենթադրում է գործընթացի վերահսկողություն:Երբ խնդրի լուծման ժամանակ դժվարություններ են առաջանում՝ նոր գաղափարներ առաջ չքաշելու պատճառով, կապույտ գլխարկ կրողները օգնության են կանչում կանաչ գլխարկ կրողներին, այսինքն՝ ստեղծարար մարդկանց, իսկ երբ, օրինակ, անսպասելի ծրագրեր են ի հայտ գալիս, այս դեպքում նրանք օգնության են կանչում սև գլխարկ կրողների:

Այս հնարը կիրառելը չափազանց դժվար է լեզվի որևէ թեմա քննարկելու ժամանակ, այնուամենայնիվ, փորձենք այն կիրառել<<*Զբաղմունքային բառապաշար և տերմինաբանություն*>>բաժինն ուսումնասիրելիս:

Դիտարկենք հետևյալ մասնագիտական տեքստը.

Տերմինաբանության մեջ ուշագրավ է այսպես կոչված միջազգային բառապաշարը կամ միջազգային տերմինների շերտը: Դրանք միևնույն ժամանակ մի շարք լեզուներում գոյություն ունեցող ընդհանուր ծագումով և նույն նշանակությամբ բառերն են, որոնք սովորաբար ձևավորվում են տվյալ լեզվի հնչյունաբանական և ձևաբանական կանոններով: Օրինակ՝ *էներգ-, էլեկտր-, ավիա-, աերո-, ավտո-*, բառերով ստեղծված տերմինները: Կան նաև տերմիններ, որոնք անփոփոխ ձևով են փոխառվում զարգացած տերմինաբանություն ունեցող լեզուներից: Օրինակ՝հայերենը խորհրդային տարիներին մեծ թվով տեմիններ է փոխառել ռուսերենից, ռուսերենը՝անգլերենից և ֆրանսերենից, օրինակ՝*սոցիալիզմ, մատերիալիզմ, իդեալիզմ, մետաֆիզիկա, սոցիոլոգ, կիբեռնետիկա, բանկ, բանկիր, ասպիրին, պենիցիլին, գրիպ, կաուչուկ, պոլիմեր, մոնոմեր, պոետ, դրամա, օպերա, բալետ, սպորտ, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ավտոբուս, տրոլեյբուս, մետրո, գազ, բենզին* և այլն: Այս կարգի տերմինները միջազգային են այն առումով, որ լայն տարածում են գտել բազմաթիվ լեզուներում: Ծագումով սրանց բառարմատները հիմնականում լատիներեն կամ հունարեն են, բայց տերմինային ձևավորում են ստացել եվրոպական լեզուներում՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի և այլ լեզուների

միջոցով, ընդ որում, հունա-լատինական շատ արմատներ այդ լեզուներում նոր իմաստներ են ձեռք բերել: Օրինակ՝*դեկան* բառը հունարենում նշանակել է*տաասնապետ,*այսօր այն նշանակում է *բուհի բաժնի դեկավար*: *Սոցիոլոգիա* բառը. *societas-հասարակություն և logos- գիտություն* բառերից նոր տերմին է ստացվել, *դեմոկրատիա՝ demos- ժողովուրդ, Kratos- իշխանություն* բառերի միացումից ստացվել է նոր տերմին:

Բարձր զարգացած հասարակություններում շատ տերմիններ հաճախ դուրս են գալիս իրենց նեղ գործածական ոլորտից և սկսում են օգտագործվել ավելի լայն բառապաշարում՝հասկանալի դառնալով հասարակության ավելի լայն շերտերին: Դրանք սկսում են չգիտակցվել որպես տերմիններ, պատճառներից մեկը դրանց՝լայն հասարակությանը ծանոթ լինելն է նախ և առաջ դրանց հետ շփման արդյունքում: Օրինակ՝*ռադիո, ինքնաթիռ, ուղղաթիռ, հրթիռ, շարժիչ, ասպիրին, գրիպ ինֆարկտ, հեռատեսություն, կարճատեսություն, տենոր, տեմբր, սիմֆոնիա, նովել, դրամա* և այլն:

Ահա այս հատվածը առավել լավ հասկանալու համար այն կարելի է քննարկել վերոհիշյալ մեթոդի միջոցով: Խումբը բաժանվում է վեց մասի, յուրաքանչյուր խումբ սկսում է կրել իրեն համապատասխան գույն ունեցող գլխարկը՝ դառնալով այդ գույնին բնորոշ մտածող: Այսպես՝

Սպիտակ գլխարկ կրողները տերմինների առանձնահատկություններին մոտենում են միայն գիտականորեն, սառնասրտորեն քննարկում են բոլոր հատկանիշները, հասկանում՝որոնք են էական կողմերը, որոնք՝ոչ, այսօրվա տերմիններին որոնք են առավել բնորոշ և այլն:

Կարմիր գլխարկ կրողները, որոնք ինտուիտիվ մտածողության կրողներն ու զգացմունքային մարդիկ են, փորձում են կռահել, թե մոտ ապագայում որքան տերմին դրսից կներխուժի մեր լեզու, ինչ ավելի հնչեղ տերմիններ կներթափանցեն հայերեն, անհրաժե՞շտ է արդյոք դրանք թարգմանել, թե՞նպատակահարմար է օտար տերմինն օգտագործել:

Իսկ ահա *սև գլխարկ* կրողները, որոնք սև գույներով են նայում աշխարհին, միանգամից կընդդիմանան տերմիններիների թափանցմանը լեզու, նրանք իրենց մտավախությունները կհայտնեն, որ այդպիսով մայրենիի անաղարտության խնդիրն առաջ կգա, և մենք չենք կարողանա պայքարել օտարաբանությունների դեմ, միգուցե շատ տերմիններ կաղավաղեն մեր լեզուն, կամ էլ դրանց համատարած թարգմանումը կխճճի լեզուն՝դարձնելով այն դժվարընկալելի և խրթին:

Դեղին գլխարկ հագնողները դրական և լավատես մարդիկ են, նրանց համար ցանկացած նորարարություն, այդ թվում և տերմինների փոխառումը լեզվի հարստացման հրաշալի միջոց է: Չպետք է վախենալ նորարարություններից ու նորամուծություններից, իսկ ավելորդ ու խրթին նորաբանությունները ժամանակի ընթացքում դուրս կգան լեզվից, եթե դրանց անհրաժեշտությունը լեզուն չզգա:

Կանաչ գլխարկ կրողները, ովքեր ստեղծագործ և ստեղծարար մարդիկ են, լեզվական բոլոր իրողություններին ստեղծագործի աչքերով են նայում: Նրանք ողջունում են յուրաքանչյուր նոր բառի ստեղծում, անգամ եթե այն շատ խրթին ու

անհասկանալի է, երկարաշունչ կամ ոչ դիպուկ: Կարևորն այն մարդու մտքի արգասիք է և կարող է լեզուն գեղեցկացնել ու ճոխացնել:

Ի վերջո, ***կապույտ գլխարկ*** կրողները որևէ կոնկրետ մտածողության կրողներ չեն,

նրանք վերահսկում են մյուս խմբերի աշխատանքը՝ անհրաժեշտության դեպքում օգնության հասնելով նրանց; Այս մի փոքր դժվար կիրառելի աշխատանքը ճիշտ կազմակերպելու և կիրառելու դեպքում կարող է խմբին վարակել անսահման ստեղծագործական մթնոլորտով և դերասանական որոշակի մոտեցում ցուցաբերելու դեպքում յուրահատուկ կդարձնի դասը:

Բառակապակցություն	**կայուն**	**Դարձվածք**
բառերի ազատ կապակցություն		բառերի կայուն
կապակցություն բաղադրիչների տեղաշարժ		բաղադրիչների կայուն տեղ
ուղիղ իմաստ		փոխաբերական իմաստ
հոմանիշների, հականիշների		հոմանիշների, հականիշների
առկայություն		սղություն, հաճախ չունենալը
լայն կիրառություն բոլոր ոճերում		հիմնականում բանավոր-առօրյա-խոսակցական ոճում

Ազատ շարադրանք: Դասի անմիջապես սկզբում սովորողները հինգ րոպեի ընթացքում շարադրում են այն ամենը ինչ գիտեն կամ ցանկանում են իմանալ թեմայի վերաբերյալ:

Օրինակ, եթե դասի թեման է՝«Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը», ապա սովորողի ազատ շարադրանքը կարող է հետևյալ տեսքն ունենալ.

Սայաթ-Նովայի մասին ես գիտեմ, որ նա աշուղ է, գրել է երգեր: Ինձ հայտնի է նրա՝ «Աշխարհումըս ախ չիմ քաշի» և «Քյամանչա» երգերը: Ես լսել եմ նրա երգերը: Գիտեմ նաև, որ Սայաթ-Նովան գրել է թիֆլիսահայ բարբառով: Դիտել եմ նաև նրա մասին պատմող գեղարվեստական ֆիլմը:

Այս հնարը նպաստում է սովորողների հետաքրքրությունների խթանմանը, վեր է հանում նախնական գիտելիքները, նպաստում է նրանց գործուն մասնակցությանը դասին:

Խթանող հարցեր: Ուսուցիչը նախապես պատրաստում է դասի նյութի հետ անմիջականորեն առնչվող հարցեր, որոնց պատասխանները զետեղված են դասի տեքստի մեջ: Այս ձևը կարող է կիրառվել բոլոր առարկաների ուսուցման ընթացքում:

Օրինակ, եթե դասի թեման է «Գրիգոր Նարեկացու կյանքը»(10-րդ դասարան), ապա դասից առաջ, խթանման նպատակով, սովորողներին կարելի ուղղել հետևյալ հարցերը.

- Որտե՞ղ է ծնվել Գրիգոր Նարեկացին:

- Ինչի՞ հետ է կապված, «Նարեկացի» անվանումը:
- Ի՞նչ է Նարեկը:
- Ո՞վ է Նարեկացին մեր ժողովրդի համար և այլն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցչի խոսքը վճռական դեր ունի սովորողների խոսքային հաղորդակցման ձևավորման գործում:

2. Խոսքային հաղորդակցումը հարկավոր է իրականացնել ճիշտ ընտրելով խոսքային մեթոդները և դրանք գրագետ կիրառելով:

3. Մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասավանդման և խոսքային հաղորդակցման ընթացքում կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

4. Երեխաների խոսքային կարողությունների ձևավորումը պետք է կապել նրանց խոսքի որոշակի ոճի զարգացման հետ՝ խոսակցական, գիտական, Գեղարվեստական և այլն:

5. Խոսքի օրինակելի նմուշներ երեխաները նախ ստանում են ընտանիքում՝ ծնողներից, հարազատներից, ապա դպրոցում՝ ուսուցիչներից և, հատկապես, այն նյութերից , գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են և պատմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Ս. Գ. , Աշակերտի խոսքի զարգացումը, Ե. , Լույս, 1973,

Ամիրջանյան Յու. Ա. , Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

В. А. Звегинцев, История языкознания XIX XXвеков в очерках и извлечениях, часть I, 1960,

Энциклопедический словарь юного филолога, Сост. М. А . Азров, М ., 1984 ,

Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր